Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
հոկտեմբերի 16-ի N 1142 - Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆՄՈՒՇԱՌՄԱՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են սննդամթերքի, կերի և կերային հավելումների (այսուհետ՝ ապրանք) արտադրության և շրջանառության փուլերում իրականացվող պետական վերահսկողության ընթացքում ապրանքի նմուշառման կարգը, նմուշների հաշվառմանը և պահմանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև լաբորատոր փորձարկման (փորձաքննության) արդյունքների ձևակերպման և գնահատման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգը ենթակա է կիրառման՝ սննդամթերքի անվտանգության և անասնաբուժության ոլորտներում պետական վերահսկողություն իրականացնող պետական մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ ապրանքի արտադրության ու շրջանառության փուլերում գործառույթներ իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ ապրանքը տնօրինող), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակված համապատասխանության գնահատման մարմնի (փորձարկման լաբորատորիայի) կողմից:

## II. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **նմուշ՝** նյութի մեկ կամ մի քանի միավորներ (ծավալ)՝ սահմանված միջոցներով ընտրված ամբողջությունից (լոտից, խմբաքանակից), որը թույլ է տալիս տեղեկություններ ստանալ ամբողջության տվյալ բնութագրի մասին և հիմք է ամբողջության, նյութի կամ դրանց արտադրական գործընթացի համապատասխանության մասին որոշում ընդունելու համար.

2) **պահեստային նմուշ՝** ապրանքը տնօրինողի ցանկությամբ՝ ընտրանքի ծավալից առանձնացված նմուշ, որը ծածկագրված, կապարակնքված կամ դրոշմակնքված հանձնվում է ապրանքը տնօրինողին.

3) **լոտ՝** ապրանքի որոշակի քանակ՝ արտադրված միևնույնը համարվող պայմաններում.

4) **խմբաքանակ՝** համասեռ ապրանքի քանակություն՝ արտադրված մեկ արտադրողի կողմից՝ համանման պայմաններում, ձևակերպված մեկ ուղեկցող փաստաթղթով և առաքված միևնույն ժամանակ: Այն կարող է լինել լոտի մաս կամ մի քանի լոտերի հավաքակազմ.

5) **նմուշառում՝** վերահսկվող ապրանքի խմբաքանակից նմուշի առանձնացման և կազմման ընթացակարգ.

6) **ընտրանք՝** ապրանքի միավորներ կամ մասեր (այսուհետ՝ նմուշներ կամ փորձանմուշներ), որոնք ընտրված են վերահսկվող ապրանքի խմբաքանակից կամ ապրանքի հոսքից՝ վերահսկողության և սահմանված պահանջներին համապատասխանության մասին եզրակացություն տալու համար.

7) **ընտրանքի ծավալ՝** ընտրանքը կազմող տրանսպորտային և սպառողական տարաներով ապրանքի միավորների քանակ.

8) **տարա՝** ապրանքը տեղավորելու համար նախատեսված փաթեթավորման տարա (արկղ, տակառ, ցիստեռն).

9) **տրանսպորտային (փաթեթավորման) տարա՝** ապրանքը տեղավորելու համար նախատեսված տարա, որն առանձին միավոր է (բեռնարկղ, պարկ, տուփ, շիշ).

10) **սպառողական տարա՝** տարա (շիշ, ապակե տարա, տոպրակ, բաժակ, բրիկետ և այլն), որի մեջ գտնվում է սպառողին մատակարարվող ապրանքը:

## III. ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ, ԿԵՐԻ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ՆՄՈՒՇԱՌՈՒՄԸ

4. Փորձարկման (փորձաքննության) համար նմուշառումն իրականացնում, նմուշները ծածկագրում, դրոշմակնքում կամ կապարակնքում և նմուշառման ակտը ձևակերպում է լիազոր մարմնի տեսուչը՝ ապրանքը տնօրինողի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ:

5. Պետական վերահսկողության իրականացման նպատակով ապրանքի խմբաքանակից կամ ապրանքի հոսքից նմուշներն ընտրվում են տվյալ ապրանքի համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված իրավական ակտերով, ինչպես նաև ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված կարգով և չափով:

6. Նմուշառումը կատարվում և ընտրված նմուշները տեղափոխվում են պահման ու փոխադրման ժամանակ նմուշները փոփոխությունից պաշտպանող նյութերից պատրաստված համապատասխան գործիքներով և տարաներով: Դրանք պետք է պատրաստված լինեն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի ցանկում ներառված նյութերից:

7. Ընտրանքի ծավալը կազմող յուրաքանչյուր նմուշին տրվում է ծածկագիր, որը փակցվում կամ կցվում է նմուշին, իսկ նմուշները դրոշմակնքվում կամ կապարակնքվում են:

8. Տեղում նմուշառման վերաբերյալ լիազոր մարմնի տեսուչի կողմից կազմվում է նմուշառման ակտ (N 1 ձև), որտեղ նշվում են՝

1) նմուշառման վայրը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և ժամը.

2) ապրանքի անվանումը, ծագման երկիրը, արտադրողի և մատակարարի (վաճառողի) անվանումները (անունը, հայրանունը, ազգանունը).

3) նմուշառում իրականացնող տեսուչի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը.

4) արտադրողի կամ ապրանքն իրացնող, պահող կամ փոխադրող կազմակերպության ներկայացուցիչների պաշտոնները, անունները, հայրանունները, ազգանունները, որոնց ներկայությամբ իրականացվում է նմուշառումը.

5) պիտանիության ժամկետը.

6) լոտի համարը և չափը (քանակը, զանգվածը, ծավալը).

7) ընտրված նմուշների, այդ թվում՝ պահեստային նմուշի (առկայության դեպքում) չափը (քանակը, զանգվածը, ծավալը).

8) նմուշառված ապրանքի պահպանման պայմանները.

9) տվյալ ապրանքի ստանդարտացման փաստաթղթին հղումը:

9. Նմուշները պահպանում ու տեղափոխում է լիազոր մարմնի տեսուչը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով նախատեսված պահանջներով:

10. Նմուշները տրամադրվում են անհատույց, իսկ նմուշների պահպանման, տեղափոխման և փորձարկման (փորձաքննության) հետ կապված ծախսերը կատարվում են լիազոր մարմնի միջոցների հաշվին՝ բացառությամբ սահմանային վերահսկողության նպատակով իրականացվող փորձարկման (փորձաքննության) դեպքերի, որոնց ծախսերը «Մթնդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կատարվում են ապրանքը տնօրինողի հաշվին:

11. Պահեստային նմուշն ի պահ է հանձնվում ապրանքը տնօրինողին: Պահեստային նմուշը պահվում է տվյալ ապրանքի համար նախատեսված համապատասխան պահման պայմաններում: Պահեստային նմուշի տեղափոխման և փորձարկման (փորձաքննության) ծախսերը կատարվում են ապրանքը տնօրինողի հաշվին: Պահեստային նմուշը փորձարկման (փորձաքննության) է ներկայացվում ուղեկցող նամակով (N 2 ձև):

12. Ապրանքի խմբաքանակը, որից կատարվել է նմուշառում, ենթակա չէ իրացման (վաճառքի) կամ այլ կերպ օտարման՝ մինչև փորձարկման (փորձաքննության) արդյունքների ամփոփումը, եթե՝

1) կենդանական ծագում ունեցող մթերքի պահման պայմանները չեն համապատասխանում սահմանված պահանջներին.

2) ներմուծման գործընթացի նկատմամբ պետական վերահսկողության ընթացքում անհրաժեշտություն է առաջանում նմուշառմամբ և լաբորատոր փորձաքննությամբ որոշելու բեռի (բացառությամբ կենդանիների) անվտանգությունը:

## IV. ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՄՈՒՇՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

13. Լիազոր մարմնի տեսուչը փորձարկման (փորձաքննության) նպատակով ընտրված նմուշներն ուղեկցող նամակով (N 2 ձև) ներկայացնում է անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակված համապատասխանության գնահատման մարմին (փորձարկման լաբորատորիա):

14. Լաբորատորիայի ներկայացուցիչն ընդունում է նմուշը՝ ստուգելով՝

1) ուղեկցող նամակի առկայությունը.

2) նմուշի փաթեթավորման պահպանվածությունը.

3) ծածկագրի և դրոշմակնիքի կամ կապարակնիքի առկայությունը.

4) ընտրված նմուշների չափի համապատասխանությունն ապրանքի և ստանդարտացման փաստաթղթերի պահանջներին:

15. Եթե լաբորատորիայի ներկայացուցիչը հայտնաբերում է, որ նմուշառումը կատարվել է սույն կարգի 14-րդ կետի պահանջների խախտմամբ, ապա նմուշները չեն ընդունվում և վերադարձվում են՝ գրավոր հիմնավորմամբ:

## V. ՆՄՈՒՇՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՊԱՀՈՒՄԸ ԵՎ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ

16. Լիազոր մարմինը և փորձարկման լաբորատորիան նմուշները հաշվառում են առանձին գրանցամատյաններում (NN 3 և 7 ձևեր):

17. Փորձարկվող նմուշների պահման ժամկետը պետք է համապատասխանի ապրանքի պիտանիության ժամկետին, որը լրանալուց հետո նմուշները Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 12-ի N 824-Ն որոշմամբ սահմանված կարգով դուրս են գրվում և ոչնչացվում:

18. Փորձարկումների ավարտից հետո փորձարկման գործընթացում օգտագործված նմուշ-ները կամ դրանց մնացորդները, ինչպես նաև փորձարկման չենթարկված նմուշները, որոնք հետագայում կարող են օգտագործվել, լիազոր մարմնի տեսուչի միջոցով վերադարձվում են ապրանքը տնօրինողին՝ կազմելով նմուշների վերադարձման ակտ (N 4 ձև):

19. Այն դեպքում, երբ փորձարկման ժամանակ նմուշները ծախսվել են կամ հետագայում իրենց ուղղակի նշանակությամբ օգտագործման համար պիտանի չեն, կամ լրացել է դրանց պիտանիության ժամկետը, կազմվում է նմուշների դուրսգրման ակտ (N 5 ձև):

## VI. ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

20. Պետական վերահսկողության նպատակով ընտրված նմուշները փորձարկվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ ստանդարտացման փաստաթղթերով սահմանված պահանջներին (փորձարկման մեթոդներին) համապատասխան՝ համաձայն «Մննդա-մթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի:

21. Եթե լաբորատորիան հնարավորություն չունի իրականացնելու նմուշի առանձին ցուցանիշների փորձարկում (փորձաքննություն), ապա այդ դեպքում տվյալ ցուցանիշների փորձարկումը (փորձաքննությունը) պայմանագրային հիմունքներով պատվիրակվում է մեկ այլ փորձարկման լաբորատորիայի, որն ունի այդ հնարավորությունը: Փորձաքննության վերջնական արձանագրությունը կազմում է այն լաբորատորիան, որտեղ հանձնվել են նմուշները:

22. Նմուշում մարդու համար վտանգավոր հելմինթային հիվանդության հարուցչի, նրա ձվերի կամ թրթուրների նույնիսկ մեկ օրինակի հայտնաբերման դեպքում արդյունքները վերջնական են:

23. Լաբորատոր փորձաքննության իրականացման ժամկետը և տևողությունը չեն կարող գերազանցել 10 աշխատանքային օրը:

24. Լաբորատորիան նմուշների փորձարկման (փորձաքննության) ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում է արդյունքները և դրանց վերաբերյալ կազմում փորձարկման արձանագրություն (N 6 ձև)՝ 3 օրինակից, որոնցից 2 օրինակն ուղարկվում է լիազոր մարմին:

25. Փորձարկման արձանագրությունն ստորագրում են փորձարկում կատարողները և լաբորատորիայի ղեկավարը: Փորձարկման արձանագրությունը վավերացվում է լաբորատորիայի կնիքով:

26. Փորձարկման արձանագրության յուրաքանչյուր էջ պարտադիր համարակալվում է՝ նշելով էջի և արձանագրության համարները:

27. Փորձարկման արձանագրության մեջ ուղղում կամ լրացում չի կատարվում: Սխալների կամ վրիպակների դեպքում կազմվում է նոր արձանագրություն, որը, որպես հավելված, կցվում է փորձարկման առաջին արձանագրությանը:

28. Պետական վերահսկողության նպատակով կատարված փորձաքննության արդյունքների հետ չհամաձայնելու դեպքում՝ տնտեսավարող սուբյեկտը կարող է դրանք բողոքարկել՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԴ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ձև N 1

_____
(պետական վերահսկողություն իրականացնող պետական մարմնի անվանումը, գտնվելու վայրը)

**Ն Մ ՈՒ Շ Ա Ռ Մ Ա Ն Ա Կ Տ N _____**
**_____ _____ _____թ.**

Ես՝ _____

_____,
(լիազոր մարմնի տեսուչի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը)
_____ -ում
(ակտը կազմելու վայրը)

_____
(ապրանքը տնօրինողի կամ նրա ներկայացուցչի անունը, հայրանունը, ազգանունը)
_____-ի ներկայությամբ

պետական վերահսկողության նպատակով ընտրել եմ ապրանքի նմուշներ՝ _____

_____
(ստանդարտացման փաստաթղթի անվանումը, նշագիրը)
ստանդարտացման փաստաթղթին համապատասխան:

Ապրանքն ստացված է ըստ _____

_____ :
(ապրանքն ուղեկցող փաստաթղթի համարը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)
Արտադրող _____
(երկիրը, կազմակերպությունը, գտնվելու վայրը)
Մատակարար _____
(երկիրը, կազմակերպությունը, գտնվելու վայրը)
Պահման տեղը և պայմանները _____

Փաթեթավորումը և մակնշումը_____

Զգայորոշման ցուցանիշների ստուգման (արտաքին զննման) արդյունքները _____

_____

| NN ը/կ | Ապրանքի անվանումը | Չափի միավորը | Խմբա-քանակի համարը | Խմբաքա-նակի չափը | Արտադրման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը | Պիտա-նիության ժամկետը | Փորձարկման կամ փորձաքննության նպատակով ընտրված նմուշի քանակը | Պահեստային նմուշի քանակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | | | | | |

Լիազոր մարմնի տեսուչ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ապրանքը տնօրինող

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

**Ձև N 2**

_____
(պետական վերահսկողություն իրականացնող պետական մարմնի անվանումը, գտնվելու վայրը)

**Ն Մ ՈՒ Շ Ն Ե Ր Ն ՈՒ Ղ Ե Կ Ց Ո Ղ Ն Ա Մ Ա Կ N _____**
**____ _____ _____թ.**

_____
(լաբորատորիայի անվանումը)

_____
(ղեկավարի անունը, ազգանունը)

Խնդրում եմ ապրանքի փորձարկման (փորձաքննության) համար կատարել_____
_____-ին համապատասխան ընտրված՝
(նմուշառման վերաբերյալ ստանդարտացման փաստաթղթի նշագիրը)
ներքոհիշյալ ապրանքի նմուշի փորձարկում (փորձաքննություն):

| NN ը/կ | Ապրանքի անվանումը | Ապրանքի նմուշների քանակը | Չափի միավորը | Նմուշի ծածկագիրը | Ցուցանիշները, ըստ որոնց պետք է կատարել փորձարկումները, և այդ ցուցանիշները սահմանող նորմատիվ փաստաթղթի նշանագիրն ու համապատասխան կետի համարը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | | | | | |

Լիազոր մարմնի տեսուչ

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

**Ձև N 3**

# Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

## ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԵՐՑՎԱԾ ԱՊՐԱՆՔԻ ՆՄՈՒՇՆԵՐԻ

| NN ը/կ | Վերահսկող մարմնի անվանումը, նմուշառման ակտի համարը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը | Ապրանքի անվանումը | Ապրանքի պի-տանիության ժամկետը | Ապրանքի նմուշառման տարեթիվը, ամիսը, ամսա-թիվը | Ապրանքի նմուշների քանակը | Փորձարկումների արդյունքները (արձանագրության համարը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը) | Ապրանքի նմուշների վերադարձման ակտի համարը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |
| | | | | | | | |

**Ձև N 4**

**Ն Մ ՈՒ Շ Ն Ե Ր Ի Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ Մ Ա Ն Ա Կ Տ N _____**

**____ _____ _____թ.**

Ես՝ _____

_____,
(հանձնող մարմնի անվանումը, հանձնողի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը)

հանձնեցի_____-ին
(պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը)

_____նմուշները՝
(ապրանքի անվանումը)

_____ քանակով:

Հանձնող _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ստացող _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

**Ձև N 5**

_____
(փորձարկման լաբորատորիայի անվանումը և գտնվելու վայրը)

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Լաբորատորիայի ղեկավար

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

**Ն Մ ՈՒ Շ Ն Ե Ր Ի Դ ՈՒ Ր Ս Գ Ր Մ Ա Ն Ա Կ Տ N _____**

**____ _____ _____թ.**

_____
(ապրանքի անվանումը, ուղեկցող նամակի համարը, փորձարկվող նմուշների քանակը)

_____

_____

Նմուշների վիճակը փորձարկումից հետո _____

_____

Նշված նմուշների պիտանիության ժամկետները լրացել են, և (կամ) փորձարկումների ժամանակ ապրանքի փորձարկվող նմուշները դարձել են օգտագործման համար ոչ պիտանի (ընդգծել) (հիմքը՝ փորձարկման արձանագրություն N_____ , ___ _____ ____ թ. դրությամբ) և ենթակա են դուրսգրման:

Փորձարկման լաբորատորիայի ներկայացուցիչներ

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

**Ձև N 6**

_____
(լաբորատորիայի անվանումը և գտնվելու վայրը)

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Ղեկավար

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

**Փ Ո Ր Ձ Ա Ր Կ Մ Ա Ն Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N _____**

**____ _____ _____թ.**

Ապրանքի անվանումը _____
(տիպը, տեսակը և այլն)

_____
(ապրանքի ծածկագիրը)

_____
(ստանդարտացման փաստաթղթի անվանումը և նշագիրը)

Փորձարկվող նմուշներ_____
(քանակը և նմուշների համարները)

Նմուշների ստացման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը_____

Նմուշները փորձարկման (փորձաքննության) ներկայացնողը_____

_____
(ներկայացնողի անվանումը և գտնվելու վայրը,

_____
ուղեկցող նամակի համարը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

Փորձարկման (փորձաքննության) կատարման վայրը_____

_____

Արձանագրություն N _____ , էջ՝ _____

Փորձարկման (փորձաքննության) արդյունքները՝

| NN ը/կ | Նմուշի ծածկագիրը | Ցուցանիշի անվանումը | Ցուցանիշի արժեքը սահմանող նորմատիվ փաստաթղթի համարը | Փորձարկման մեթոդը սահմանող նորմատիվ փաստաթղթի համարը | Չափի միավորը | Ցուցանիշի արժեքը | | Եզրակացությունը՝ ըստ փորձաքննության արդյունքների |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ըստ նորմատիվ փաստաթղթի | փաստացի ստացված | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

_____
(փորձարկման (փորձաքննության) ավարտը՝ տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

Եզրակացություն _____ -ի
(ապրանքի անվանումը)

փորձարկման նմուշները համապատասխանում են (չեն համապատասխանում) _____

_____-ի
(իրավական ակտի, ստանդարտացման փաստաթղթի անվանումը, նշագիրը և կետերի համարները)
պահանջներին՝ ըստ _____
(լրացվում է համապատասխան ցուցանիշների անհամապատասպանության դեպքում)

Արձանագրությունը կազմված է _____ էջից, _____ օրինակով:

| | | |
|---|---|---|
| Պատասխանատու կատարողներ | _____ (ստորագրությունը) | _____ (անունը, ազգանունը) |
| | _____ (ստորագրությունը) | _____ (անունը, ազգանունը) |
| Փորձարկման լաբորատորիայի ղեկավար | _____ (ստորագրությունը) | _____ (անունը, ազգանունը) |

**Ձև N 7**

# Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

## ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՍՏԱՑԱԾ ԱՊՐԱՆՔԻ ՆՄՈՒՇՆԵՐԻ

| NN ը/կ | Պետական վերահսկո-ղության մարմնի ան-վանումը, ուղեկցող նամակի համարը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը | Ապրանքի անվանումը | Ապրանքի պիտանիության ժամկետը | Ապրանքի նմուշի ստացման տարե-թիվը, ամիսը, ամսաթիվը | Ապրանքի նմուշների քանակը | Փորձարկումների արդյունքները (արձանագրության համարը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը) | Ապրանքի նմուշների դուրսգրման կամ վերա-դարձման ակտի համարը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |